**ՔԱՂՎԱԾՔ**

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2023 թվականի մայիսի 31-ի ժամը 14:00-ի նիստի**
**N 7 արձանագրությունից**

**ԼՍԵՑԻՆ.-** Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Ռազմիկի Հակոբյանի**՝ ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. Լ.Ռ.Հակոբանը 2019 թվականի սեպտեմբերի 2-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնում որպես «Հայոց լեզու և հայ գրականություն» դասընթացի դասախոս. նախ՝ 02.09.2019 - 30.06.2020՝ համատեղության կարգով ասիստենտ (0,5 դրույք), իսկ 2020 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ասիստենտ (1,0 դրույք): Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Լ.Ռ.Հակոբյանը ծնվել է 1982 թվականի հոկտեմբերի 21-ին Երևան քաղաքում՝ բժշկի և մանկավարժի ընտանիքում: 1989-1998 թթ. սովորել է Երևանի թիվ 45 միջնակարգ դպրոցում, 1989-1999 թթ.՝ Երևանի «Քվանտ» վարժարանում: 2000 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետ, որը գերազանցությամբ ավարտել է 2004 թվականին: 2004-2006 թթ. սովորել է նույն ֆակուլտետի մագիստրատուրայում «Հայոց լեզվի պատմություն» մասնագիտացմամբ: Ուսումնառությանը զուգահեռ՝ Լ.Ռ.Հակոբյանը 2004 թվականից աշխատում է «Քվանտ» վարժարանում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, 2011 թվականից վարժարանի՝ Միջազգային բակալարիատի (IB) «Language A1:Literature» առարկայի ուսուցիչ, 2018 թվականից նաև «Քվանտ» վարժարանի հասարակության հետ կապերի (PR) պատասխանատու: 2004-2007 թթ. եղել է «Մենք մեր մասին» ամսագրի գլխավոր խմբագիրը: 2012-2014

թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի պատմության ամբիոնում որպես գրաբարի դասախոս: 2014-2016 թթ. եղել է Վիեննայի միջազգային դպրոցի «Language A1:Literature» առարկայի ուսուցիչ: 2020-2022 թթ. մի շարք նախաձեռնությունների շրջանակում որպես կամավոր ուսուցիչ աշխատել է Արցախի Հանրապետության՝ տարբեր տարիքային խմբերի երեխաների հետ, ինչի համար 2022 թվականին արժանացել է Արցախի Հանրապետության Նախագահի շնորհակալագրին: Մասնակցել է տեղական և միջազգային վերապատրաստման մի շարք դասընթացների, որոնցից ուշագրավ են Միջազգային բակալավրիատի «Դիպլոմա» ծրագրի՝ տարբեր տարիների վերապատրաստումները (2011 թ., 2017 թ., 2019 թ.): Տարբեր տարիների արժանացել է մի շարք պատվոգրերի, մասնավորապես կրթության բնագավառում ձեռքբերումների, զգալի ավանդի համար՝ ԵՊՀ պատվոգրի, կրթության, դաստիարակության ոլորտում ներդրած ավանդի համար՝ ՀՀ ԿԳՆ պատվոգրի:

2022 թվականին Լ.Ռ.Հակոբյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Կիրակոս Գանձակեցու «Պատմություն հայոց» երկի լեզուն» թեմայով և ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նա հրատարակել է 12 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 5 է (1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 4 գիտական հոդված (2-ը՝ անգլերեն)՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում, որից 1-ը՝ համահեղինակությամբ):

Լ.Ռ.Հակոբյանը իրեն դրսևորել է որպես բանիմաց, բարեխիղճ մասնագետ, վայելում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հարգանքը:

Լեզուների ամբիոնը միաձայն (կողմ՝ 29, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) երաշխավորել են Լ.Ռ.Հակոբյանին մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-**

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Ռազմիկի Հակոբյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի

քվեարկությանը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

**Քվեարկության արդյունքներն են.** գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 49-ը, քվեարկությանը մասնակցել են 49-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 49, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-**

1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիթ Ռազմիկի Հակոբյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (խմբ. 17.02.2022 թ. N 177 - Ն) 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Լիլիթ Ռազմիկի Հակոբյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Բանասիրական գիտություններ»** բնագավառի **Ժ.02.01՝ «Հայոց լեզու»** մասնագիտությամբ:

2. **Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:**

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Ռ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. մայիսի 31
Երևան